# «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

Հասարակական նշանակության կցակառույց օբյեկտի կառուցում

ք. Երևան, Կենտրոն վ/շ, Աբովյան փողոց հ. 7 / 5

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ՝ - ճարտարապետաշինարարական մաս

Պատվիրատու՝ Վահե Բաղդասարյան

Կատարող՝ «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
տնօրեն

Ն.Գ.Ճ

Ա.Անդրեասյան

Հ.Անդրեասյան

ԵՐԵՎԱՆ 2019




«ՀՈՎԱՐՍ ՇԻՆ» ՍՊԸ

ԼԻՑԵՆԶԻԱ 15819

ООО "ОВАРС ШИН"

ЛИЦЕНЗИЯ 15819

" HOVARS SHIN " LLC

---

ՀՀ ք.Երեվան
Վ. Համբարձումյան 14/4-40

հեռ.093283826

РА г. Ереван
ул.В.Амбарцумяна 14/4-40

тел: 093283826

N 115/19

<<11>> 10 2019թ

*Պատվիրատու՝ Վահե Բաղդասարյան*

*Նախագծող՝ «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ*

*տնօրեն Ա.Անդրեասյան*

«ՀՈՎԱՐՍ ՇԻՆ» ՍՊԸ նախագծային փորձաքննությունը դիտարկելով ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Աբովյան փողոց հ. 7/4 հասցեում հասարակական նշանակության կցակառույց օբյեկտի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերը՝ երաշխավորում է այն հաստատման:

Առդիր՝ եզրակացություն 2 էջից:

*Տնօրեն* *Հ.Հովհաննիսյան*

# «ՀՈՎԱՐՍ ՇԻՆ» ՍՊԸ

«ՀՈՎԱՐՍ ՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն Հովհաննիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կենտրոն վարչական շրջան, Աբովյան փողոց հ. 7/4 հասցեում

Հասարակական նշանակության կցակառույց օբյեկտի կառուցման

աշխատանքների նախագծային փաստաթղթերի

*Պատվիրատու՝ Վահե Բաղդասարյան*

*Նախագծող՝ «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ*

*տնօրեն Ա.Անդրեասյան*

*Նախագիծ կազմելու համար հիմք է հանդիսացել հ. 01/18-07/8-78842-973 ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրված 27. 089. 2019թ. , սեփականության վկայականը*

*ճարտարապետաշինարարական մաս*

Նախատեսված է գոյություն ունեցող մայթի լայնությունը ավելացնել

Բնակլիմայական պայմաններն են՝

Ձյան բեռնվածքը - 70 կգու/մ2

Սեյսմիկակայունությունն – 9 բալ, 3-րդ գոտի

Որպես 0.00 պայմանական նիշ ընդունված է 1-ին հարկի հատակի մաքուր նիշը

Մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը - մետաղական հիմնակմախք

Սյուները և հեծանները - նախատեսված են մետաղից

Հիմքերը - հիմնային հեծաններ, որոնց մեջ ներառված են ներդիր էլեմենտներ և դուրս բերումներ

Ծածկերը - միաձույլ ե/բետոնե

Տանիքները - հարթ , ջրահեռացումը կազմակերպված

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան
3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին
4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. հրամանով ամրագրված պահանջներին
5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

<u>Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ-նախահաշիվը</u>

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահնաջներին, նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Հ.Հովհաննիսյան

Ռ.Աղաջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

№ 13389

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
[illegible]

(գործունեության տեսակը)

«08 սեպտեմբերի 2009թ.» «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ, ք. ԵՐԵՎԱՆ, ՄԱՍԻՍՅԱՆ փող. 32, բն. 19

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը,
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը ԱՆԺԱՄԿԵՏ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

ՃԲԴ - Ա-085

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

## ԵՆԹԱԴԱՍ «Ա»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

## ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ՌԱԶՄԻԿԻ

Ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում առանց սահմանափակումների, բացառությամբ տարածական պլանավորման փաստաթղթերի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, ամրակայման և օգտագործման նախագծերի մշակման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա. Ռ[illegible]ԱՐՅԱՆ

ՏՐՎԱԾ Է 15.03.2019
ԱՆԺԱՄԿԵՏ

ԿԵԴ -Ա2-007

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա2»

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ - ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

## ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԲԵԳԼԱՐԻ

Սահմանափակումներ՝ Արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավելի 3 հարկից,
մինչև 12մ բարձրությամբ և 9մ թռիչքով շենքեր, մինչև 15մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ,
որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին:
Արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավելի 6 հարկից,
մինչև 21մ բարձրությամբ և 9մ թռիչքով շենքեր, մինչև 24մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ,
որոնք համապատասխանում են միջինից բարձր ռիսկայնության աստիճանին:
Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա. ԳՈՒԼԱՐՅԱՆ

ծ է 15.03.2019
ՄԿԵՏ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 523

քաղ. Երևան «14» 10 2019թ.

«ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ , որը հետագայում անվանվում է «ԿԱՏԱՐՈՂ» , ի դեմս գործադիր տնօրեն Ա.Անդրեասյանի մի կողմից և

( կազմակերպության , ձեռնարկության անվանումը )

ի դեմս ՝ Վահե Բաղդասարյանի

( պաշտոնը, անուն, ազգանուն )

մյուս կողմից ( ստորև կոչվող << Պատվիրատու>>), կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1 << Պատվիրատու >>-ն պատվիրում է, իսկ <<Կատարող>>-ը ստանձնում է կատարելու հետևյալ աշխատանքները` ք. Երևան,. Կենտրոն վ/շ, Աբովյան փողոց հ.7/5 հասցեում Հասարակական նշանակության կցկակառույց օբյեկտի կառուցման աշխատանքների նախագծի հեղինակային հսկողություն իրականացնելու

2 Աշխատանքի կատարման ժամկետը << ____ >> ________ 2019 թ-ից մինչև << ____ >> ____________ 201 թ-ը:

3 Թիվ մեկ կետում նշված աշխատանքների կատարման համար << Պատվիրատուն >> պարտավորվում է << Կատարողին>> վճարել ____________________
Նշված գումարի ____ % - ը ____________________
<< Պատվիրատու >>-ն պարտավորվում է վճարել որպես կանխավճար պայմանագիրը կնքելուց ________ օրյա ժամկետում:
Վերջնավճարը ըստ սույն պայմանագրի կատարվում է ավարտված աշխատանքների ընդունման ժամանակ:

4 Կատարված աշխատանքների ընդունումից հետո << Պատվիրատուի >> ցանկությամբ կատարվող փոփոխությունների և լրացուցիչ աշխատանքների համար կնքվում է նոր պայմանագիր

5 Պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կողմերի ստորագրման պահից

6 Սույն պայմանագրի կատարման ընթացքում ծագած հարցերը ենթակա են լուծման ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխան

7 Պայմանագիրը կազմվում է երկու օրինակից, որից մեկը պահվում է <<Պատվիրատուի >>, մյուսը << Կատարողի >> մոտ:

## ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

| «ԿԱՏԱՐՈՂ» | «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» |
|---|---|
| «ՀԱԲՇԻՆ. ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | Սեփականատեր |
| ք.Երևան, Սվաճյան 32 բն. 19 | |
| Հ/Հ 2480101514180000 | |
| «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ | |
| ՀՎՀՀ 01844994 | |
| Տնօրեն Ա.Անդրեասյան | Վ.Բաղդասարյան |

Ձև N 1-2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-07/2-78842-973 «27» «09» 2019թ.

| | |
|---|---|
| Օբյեկտ | Հասարակական նշանակության կցակառույց օբյեկտի կառուցման (միջինից բարձր ռիսկայնության օբյեկտ, 3-րդ կատեգորիա) |
| (օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հանգիստ բնույթը, հզորությունը, ժամկետները) | |
| շինարարական | նախագծային փաստաթղթերի մշակման համար |
| (նախագծման փուլերը և այլն) | |
| Գտնվելու վայրը | Կենտրոն վարչական շրջան, Աբովյան փող. հ.7/5 |
| (վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը) | |
| Կառուցապատող | Վահե Բաղդասարյան |
| (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն) | |
| Առաջադրանքի տրամադրման հիմքը | Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 07042015-010016 վկայականը,ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության 19.04.2016թ. հ.04/22.12/2537-16 գրությունը, ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարության 19.08.2019թ. հ.03/14-1/16832-19 գրությունը, հարևանությամբ գտնվող հասարակական սպասարկման օբյեկտի սեփականատիրոջ համաձայնագիրը իրականացվող կցակառույցին իրեն պատկանող օբյեկտից ինժեներական ցանցերին միանալու մասին, էսքիզային նախագիծ: |
| (կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հավաստող անհրաժեշտ փաստաթղթեր) | |

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անհրաժեշտ մասշտաբով Մ 1:500)

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: |
| (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը) | |
| 2. (*) Հողամասի չափերը | 0.009328 հա: |
| (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)) | |
| 3. Հողամասի առկա վիճակը | Սպանդարյանի անվ. Ռուսական պետական դրամատիկական թատրոնի շենքի ետնամասում գտնվող՝ կառուցապատողից ազատ հողատարածք: |
| (ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն) | |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | Տերյան և Հին երևանցու փողոցներ: |
| (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն) | |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ: |
| (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ սարքերը) | |
| 6. (*) Կից հողամասեր | Հյուսիսային պողոտա, Հին երևանցու փողոց, հասարակական նշանակության շենքեր և շինություններ, բազմաբնակարան բնակելի շենքեր: |
| (կից հողօգտագործողների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) | |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտու հ.1-2 հատված |
| (հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն) | |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | ------ |
| (տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) | |

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անհրաժեշտ մասշտաբով Մ 1:500)

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | Մշակել մեկ հարկանի հասարակական նշանակության կցակառույց օբյեկտի նախագիծ հ. 07042015-010016 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում: |
| (ելնելով ՀՀ օրենսդրության և տարածքային պլանավորման փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմվելիք) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկությունները ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) | |
| 9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | ------ |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | Հարակից բնակելի շենքերից կառույցի վերգետնյա մասի հեռավորությունը նախատեսել գործող նորմատիվային պահանջների համաձայն: |
| 9.3.թույլատրելի բարձրությունը (մետր) | Կցակառույցի առավելագույն բարձրությունը նախագծային զրոյական նիշից մինչև 4.8մ: |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | ------ |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | Ըստ ներկայացված էսքիզային նախագծի: |
| 9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | Ըստ ներկայացված էսքիզային նախագծի: |

9.7. այլ պահանջներ

- Սույն թույլտվության 20-րդ կետով ամրագրված պահանջները ապահովելու նպատակով՝ շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը:
- Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները:
- Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
- Նախագծով հաշվի առնել ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարության 19.08.2019թ. հ.03/14-1/16832-19 գրությամբ հիշատակված առաջարկները և դիտողությունները:
- Տանիքները նախատեսել հարթ, ջրահեռացումը կազմակերպված՝ բացառելով անձրևաջրերի հոսքը դեպի հարակից հողամասեր:

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը | ------- |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ------ |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | *Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն:* |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում | ------- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | ------- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | ------- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | ------- (համաձայն N 1 հավելվածի 57 րդ կետի 2 րդ ենթակետով սահմանված երաշխավորված ամրագծերի) |
| 12.5. թույլ հոսանքներ | ------- |
| 12.6. աղբահանություն | ------- |

13\. Տարածքի ինժեներական նախապատրաստում — *Կազմակերպել ջրահեռացում:*

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14\. Բարեկարգում — *Հարակից տարածքը բարեկարգել:*

(խոնղշտիկապային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15\. Շինարարական նյութեր — *Երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:*

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16\. Պաշտպանական կառույցներ — ------

(արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17\. Հակահրդեհային պահանջներ — *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները:*

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18\. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — *Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:*

19\. Շրջակա միջավայրի պահպանում —

- *Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ:*
- *Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները:*

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20\. Շինարարության կազմակերպում — *Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:*

111\. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի ՍՆիՊ 1.04.03-85* (Ձեռնարկությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն:
112\. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարեկարգման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21\. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — *Մեկուկես տարի:*

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22\. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — *ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պարզ փորձաքննություն:*

(ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23\. Միջանկյալ համաձայնեցում — *ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:*

(իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89 րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

24\. Հասարակական քննարկումներ — ------

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25\. Համաձայնեցումներ —

- *Երևանի քաղաքապետի հետ:*
- *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56 րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26\. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում — ------

27\. Այլ պայմաններ — *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:*

*Երևանի քաղաքապետ՝*
*Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «7» Ապրիլի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Վահե Բաղդասարյան Արմենի

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երևան, Կենտրոն Աբովյան փողոց 7/5

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Երևանի քաղաքապետի 19.03.2015թ. թիվ 769-Ա որոշում, Ճարտարապետահատակագծային առաջադրանք 19.03.2013թ., Հողամասի առուվաճառքի պայմանագիր 26.03.2015թ. թիվ 1005

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0424-0025

Մակերեսի չափը (հա)՝ 0.009328

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արսեն Մալխասյան

զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

**Քաղվածք**

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2019 թ. օգոստոսի 9-ին ժամը 14[15]- ին կայացած 7-րդ նիստի արձանագրության*

---

*Նիստի նախագահ՝* Ն. Խաչատուրյան
*Քարտուղար՝* Կ. Հակոբյան

*Մասնակցում էին՝* Ա. Աբրոյան, Հ. Սանամյան, Կ. Փահլևանյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Շաբարյան, Ա. Դավայան, Գ. Նալբանդյան, Հ. Հարությունյան, Ա. Ղուլյան, Գ. Համազասպյան, Հ. Ղազարյան

*Հրավիրված էին՝* Գ. Կնյազյան, Ս. Մելիք-Քարամյան, Հ. Հարությունյան, Ա. Կիրակոսյան, Վ. Գրիգորյան, Ա. Եղիազարյան, Հ. Վարդանյան, Ն. Ավետյան

3. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աբովյան 7/5 հասցեում Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի ետնամասի պատին կից, միահարկ հասարակական նշանակության շինություն կառուցելու էսքիզային նախագծի քննարկում:

Զեկ.՝ Վ. Գրիգորյան

*ԼՍԵՑԻՆ՝ Վ. Գրիգորյանը* ներկայացրեց նախագիծը. Աբովյան 7/5 հասցեում Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի ետնամասի պատին կից նախատեսվում է կառուցել միահարկ հասարակական նշանակության շինություն: Այդ տարածքը՝ սեփականություն է: Շինության չափերը կազմում են 2.8 մ x 32.8 մ: Կառույցը Նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներից:

*ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝*

*Հ. Սանամյան* - իսկ հասարակական նշանակության շինության գործառնական նշանակությունը ո՞րն է՝ խանութ է, սրճարան է, գինետուն է, բաղնիք է, դրանք բոլորը հասարակական նշանակություն ունեն:

*Վ. Գրիգորյան* - Հստակ չգիտեմ, բայց քանի որ տարածքը նեղ է՝ 2.8 մ, գինետան համար հնարավոր չէ օգտագործել, հավանաբար տարածքը օգտագործվելու՝ խանութի համար:

*Ս. Մելիք-Քարամյան* - հատակագծից երևում է, որ սան. հանգույց նախատեսված չէ, ինչը պարտադիր պահանջ է: Պատվիրատուին անհրաժեշտ է հուշել այդ պահանջի մասին:

*Ա. Աբրոյան* - Ի՞նչ առնչություն ունի այս օբյեկտը թատրոնի շենքի հետ, որ Դուք անմիջապես թատրոնի պատին կից կցակառույց եք նախատեսում:

*Վ. Գրիգորյան* - Թատրոնի հետ որևէ առնչություն չունի:

սեփականատեր ունի, որը կցակառույց է նախատեսում: Ինչո՞ւ է թատրոնի պատին կից այդ անհասկանալի կցակառույցը ավելանում, այն դեպքում երբ կարելի էր այդ տարածքի հաշվին փողոցը ընդլայնել: Ինչո՞ւ է հուշարձանի տարածքում այլ սեփականատեր: Հուշարձանի տարածքը պետք է դրամատիկական թատրոնի ֆունկցիոնալ նշանակությանը համարժեք լինի, գործառնական նշանակությունը հուշարձանին վերաբերվող պետք է լինի: Օրինակ, եթե Դուք, ենթադրենք, նախատեսեք թատրոնի սպասարկման նպատակով գործառույթ, հասկանալի կլինի, որովհետև այդ դեպքում Դուք հուշարձանի ռեժիմ չեք խախտում: Այսինքն մենք ռեժիմի ապահովման խնդիր ունենք. ի՞նչ բնույթի շինություն է լինելու, որ համարժեք կլինի թատրոնին: Այդ բնույթը պետք է լինի թատրոնի հուշարձան-շենքին ուղղված: Եթե կապահովվի այդ պահանջը, ես դեմ չեմ նման միջամտությանը, իսկ եթե չի ապահովվելու ռեժիմը և անթույլատրելի գործունեություն է ծավալվելու այնտեղ, ուրեմն նվաստացվելու է թատրոնի գործունեությունը: Մենք պայմաններ պետք է դնենք՝ բնույթը, շենքի սպասարկումը (մայթի լայնություն), այսինքն քաղաքաշինական նորմերի ապահովումը:

Կ. *Հակոբյան* – գործառնական նշանակության, կամ բնույթի տեսանկյունից շինության տարածքը կարելի է օգտագործել թատրոնին վերաբերող գրքերի և հուշանվերների վաճառքի համար:

Գ. *Համազասպյան* - Քաղաքշինական նորմերին համապատասխանո՞ւմ է Ձեր նախագիծը, թեկուզ մայթի լայնությունը՝ ապահովվա՞ծ է:

Հ. *Սանամյան* – Հուշարձանի տարածքը սեփականաշնորհվել է, սեփականաշնորհված տարածքի վրա մեկ հարկանի շինություն է կառուցվելու, ինչը չի կարելի: Անօրինական սեփականաշնորհում է տեղի ունեցել իմ կարծիքով, և եթե մեկ անգամ մերժենք, մյուս անգամ կադաստրը այդպիսի թույլտվություն չի տա: Հուշարձան-շենքին կցակառույց է նախատեսվում, ինչը նշանակում է հուշարձանի տեսքի փոփոխություն: Առաջարկում եմ մերժել նախագիծը:

Գ. *Համազասպյան* – Կարելի է բարեկարգել այդ սեփականաշնորհված տարածքը, և այդ տարածքը հատկացողը և թույլտվություն տվողը պետք է փոխհատուցի սեփականատիրոջը:

Ն. *Խաչատրյան* – Այստեղ սեփականության իրավունքի հարցն է, որը ամրագրված է նաև սահմանադրությամբ: Ինչքան էլ սխալ են թույլտվությունը տվել, թե ճիշտ, չգիտենք, բայց արդեն այն սեփական տարածք է: Ի՞նչպես ենք վարվում այս դեպքում, պետք է հասկանալ:

Հարցը դրեց քվեարկության՝ երկու տարբերակով.

1. մերժել նախագիծը, 2. բնույթի և քաղաքաշինական նորմերի ապահովման պայմաններով՝ համաձայնեցնել նախագիծը: Քվեարկության արդյունքում 7 կողմ ձայներով անցավ երկրորդ տարբերակը:

*ՈՐՈՇՎԵՑ՝* Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աբովյան 7/5 հասցեում Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի ետնամասի պատին կից, միահարկ հասարակական նշանակության շինություն կառուցելու էսքիզային նախագիծը համարել ընդունելի՝ պայմաններով՝ ապահովվել քաղաքաշինական նորմերը և թատրոնին համարժեք հասարակական նշանակության շինության գործառնական նշանակությունը (բնույթը):

Խորհրդի նախագահ՝ Ն. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Քարտուղար՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.010520632, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Governmental House 2, Yerevan, www.edu.am, secretariat@edu.am

No ____________________ « _____ »__________________ 2019թ.

Երևանի գլխավոր ճարտարապետ
ԱՐԹՈՒՐ ՄԵՍՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսչյան

Ի լրումն մեր 2019 թ. հունիսի 24-ի N 03/14-1/11340-19 գրության՝ հայտնում ենք, որ սույն թվականի օգոստոսի 9-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 7-րդ նիստում քննարկվել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոցի հ. 7/5 հասցեում միահարկ հասարակական նշանակության շինության իրականացման էսքիզային նախագիծը:

Համաձայն նախարարության գիտամեթոդական խորհրդի որոշման վերոնշյալ էսքիզային նախագիծը համարվել է ընդունելի՝ պայմանով, որ ապահովվեն խորհրդի որոշման դիտողությունները և լրամշակված նախագիծը կրկին ներկայացնել նախարարություն:

Կից ներկայացնում ենք նիստի արձանագրության քաղվածքը:

Առդիր՝ 2 էջ:

Invalid signature

X

Հարգանքով՝ Signed by: KHACHATURYAN NARINE 6602620207 ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՊՄՀՊ գործակալություն
Կատ.՝ Խ. Մնացականյան
Հեռ.՝011 52 57 94